

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅԻՆ

Մայիսի 10-ի կոնգակին յաջորդեց յունիսի 7-ի թ. 693 կոնգակը, որը ամենալայն իրաւունքներ է տալիս ժողովրդին՝ նրա ընտրեալ լիազօրներին վերադարձնելով եկեղեցու վերաբերեալ դպրոցական, անտեսական գործերը և թեմական ժողովներ կարգաւորելու հարցերում: Մենք կարծում ենք, որ ռուսահայ վեց թեմերի ընտրեալ լիազօրները ստիպուած կլինեն զբաղուել եկեղեցու և այլ անյետաձգելի հարցերով և կանոնաւոր ու ամենքին բաղձալի լուծումն կը տան նրանց:

Այս կոնգակով իրականացած պէտք է համարել ժողովրդի ամենածայրահեղ պահանջներ անող մասի իղձերը, որովհետեւ այդ կոնգակից յետոյ եկեղեցին իւր հոգեւորականներով իրրի առանձին հաստատութիւն այլ ևս չի ներկայանում և սորանից յետոյ Հայաստանեայց եկեղեցի ասելով պէտք է հասկանալ բոլոր հայերին առհասարակ՝ հոգեւորական և աշխարհական, մարդ և կին, մեծ և փոքրը միասին վերցրած:

Բայց այս նշանաւոր րոպէից սկսած իւրաքանչիւր հայ մարդու վրայ բարդւում, ծանրանում է մի շատ մեծ և սուրբ պարտականութիւն. զգալ, որ ինքը, որպէս հայ, որոշ պարտք ունի կատարելու դէպի եկեղեցին—կամ ամբողջ հայութիւնը, Զգալ, որ ինքը պարտք ունի որպէս իրաւատէր և ձայնատէր՝ իւր ցանկութիւններն ու կամքը այդ ձայնատուութեամբ արտայայտելու խելացի կերպով՝ մասնակցելով բոլոր ծխական վիճակային, թեմական ընտրութիւններին և հայութեան բոլոր գործերին: Նա պէտք է զգայ այդ ձայնի ամբողջ սրբութիւնը, գինը և նշանակութիւնը և որքան լուրջ և պարտաճանաչ կերպով մօտենայ քուէտուփին, այնքան մեծ ծառայութիւն պէտք է մատուցանի իւր մարդավայել գոյութեան և ճշմարիտ քրիստոնէական յառաջադիմութեան գործին: Այո, չը պէտք է մոռանալ, որ

հոգեւոր և աշխարհիկ բիւրօկրատիան ծնունդ է ժողովրդի թուլութեան և անտարբերութեան, նրա անգիտութեան և պարտաճանաչութեան և եթէ մեր ժողովուրդը սովորական անտարբերութեամբ վերաբերուի ընտրական վեճաբանութեան, անշուշտ չի ազատուիլ ոչ թէ հոգեւոր բիւրօկրատիայից, այլ հնարաւորութիւն կը տայ մի խումբ մարդկանց դիքտատորութեան հասցնելու իրենց վարժունքը և եկեղեցին առաւել մեծ փորձանքի և վտանգի ենթարկու, քան ինչ որ նա ունեցել է երբ և իցէ։ Չայն ունեւնալու և իւր եկեղեցու բոլոր գործերին միջամտող՝ իրաւունք ստացող ժողովուրդը այժմք է հերոսաբար դուրս գայ և պահանջի, որ ոչ ոք, ոչ մի մեքենայութեամբ և սպառնալիքով չը յանդգնի բռնաբարելու իւր իրաւունքը, պահանջի կատարեալ ազատութիւն և ամենաւերջ միօրեայ ձայնատուութիւն, որովհետեւ, եթէ նորից զանազան սահմաններ դրուին ժողովների կանոնաւորութեան և անկանոնութեան, և երկրորդ ու երրորդ ժողովներ նշանակուին, երբէք պակաս չեն լինիլ այն մարդկանց խմբերը, որոնք մեր քահանաներից շատերի շնորհիւ շարաթական մի եկեղեցու ծուխ կլինեն և իրենց գռեհկութեամբ և կոյր կուսակցականութեամբ կը բռնաբարեն և կը խեղդեն ժողովրդի ձայնը։

Ուրեմն՝ հեռու ժողովրդի վրայից բռնութիւն և սպառնալիք, տուէք նրան կատարեալ ազատութիւն իւր պարզուի կամքն արտայայտելու. մտէք, քարոզեցէք, ազատ խօսքով և գաղափարներով մրցեցէք իրար հետ, ազատեցէք այդ խեղճ ժողովրդին ամեն կողմից ճնշող մամուլից և նա կ'ապացուցանի, որ բազմութեան ձայնը իսկապէս Աստուծոյ ձայն է, որ նա այդպիսի ազատութեան միջոցին երբէք չի սխալուիլ։

Մի կէտ, որ տարաբախտաբար մոռացութեան է տուած, դա նախապատրաստական մասնաժողովների կազմութիւնը, հարկաւոր նիւթերի քննութիւնն ու մշակութիւնն է։ Յանկալի է, որ իւրաքանչիւր թեմում այժմեանից կազմուին նախապատրաստական աշխատանքներ կա-

տարող մասնաժողովներ, որոնք պէտք է ի նկատ առնեն եկեղեցու անցեալը, նրա լաւագոյն կազմակերպութեան ձևերը, դպրոցական ներկայ կեանքը համեմատաբար ազատ և լուսաւորեալ երկիրներում, մեր տեղական հանգամանքները, պահանջներն ու կարիքները: Կատարելու ահագին գործ կայ. հարկաւոր է նախապատրաստական մեծ աշխատանք, որպէս զի ժողովրդի ընտրեալ լիազօրները ձեռքի տակ որոշ նիւթ ունենան և ոչ թէ հաւաքուեն ու նոր սկսեն նախապատրաստական գործը:

Յաւալի է նոյնպէս, որ մասնակցութեան չեն կոչուած էջմիածնայ միւս չորս թեմերը՝ Ատրպատականի, Նոր Զուղայի, Եւրոպայի և Ամերիկայի, որոնցից վերջին երկուսի ներկայացուցիչները ուսուցանելու շատ բան կ'առնէին, իսկ առաջին երկու թեմերի ներկայացուցիչները կը սովորէին:

Բայց հաւանական է, որ ներկայ համաժողովում կարծարծուին բազմաթիւ այնպիսի խնդիրներ, որոնց համար հարկաւորութիւն կը զգացուի գումարելու ընդհանուր եկեղեցական ժողով և այդ պակասը հաւանականաբար կը լրացուի մօտ ապագայում:

Ժողովուրդ հայոց, մի մոռանար, որ այսուհետև ոչ թէ կաթողիկէով շինութիւններն ու միայն հոգևորականներն են եկեղեցի կազմում, այլ դու ինքդ, քեզ նմանների ժողովը, թէ հոգևորականներից և թէ աշխարհական անձերից: Այո, յունիսի 7-ից յետոյ եկեղեցու շէնքը սոսկ աղօթատեղի է և ուրիշ ոչինչ, որ նա սխալմամբ էր եկեղեցի անուան իւր վրայ առել: Ո՛չ, կենդանի և բազմաչարչար ժողովուրդ հայոց, Հայաստանեայց եկեղեցին դու ես, աշխատիր կենդանի, աչքաբաց, գործունեայ և աշխատասէր լինել, աշխատիր նախանձախնդիր լինել քո իրաւանց և արթուն դէպի քո բոլոր պարտաւորութիւնները, աշխատիր անլեզու քարի ու կրի չը նմանուել, որովհետև լուութիւնդ ու անտարբերութիւնդ յանցանք կը ծնի: Ժողովուրդ հայոց, լուութիւնից ոչ ոք չէր վնասում և տուժում: